

ՀՀ Կենտրոնական բանկի նախագահի

Որոշում N1/313Ա

11/06/2020

«ԱՍԿԵ ԳՐՈՒՊ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ  
ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐԸ ԳՐԱՆՑԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ

«Ասկե Գրուպ» ԲԲԸ-ն 2020 թվականի հունիսի 9-ին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ է ներկայացրել 15,000,000,000 ՀՀ դրամ և 15,000,000 ԱՄՆ դոլար ծավալով արժեկտրոնային անվանական պարտատոմսերի ծրագրային ազդագրի գրանցման հայտ, ինչպես նաև համապատասխան ազդագիրը և «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով ծրագրային ազդագրի գրանցման համար պահանջվող բոլոր փաստաթղթերը: «Ասկե Գրուպ» ԲԲԸ-ն հունիսի 10-ին ներկայացրել է նաև ազդագրի լրացում:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածը և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի եզրակացությունը (2020 թվականի հունիսի 10-ի թիվ 26 արձանագրություն)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գրանցել «Ասկե Գրուպ» ԲԲԸ-ի կողմից 2020 թվականի հունիսի 9-ին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացված 15,000,000,000 ՀՀ դրամ և 15,000,000 ԱՄՆ դոլար ծավալով արժեկտրոնային անվանական պարտատոմսերի ծրագրային ազդագիրը:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

ԱՐԹՈՒՐ ԶԱՎԱԴՅԱՆ